




ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ISSN 2738-2524

ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



ВЕСТНИК

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

MESSENGER

OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2020 [2]
ԵՐԵՎԱՆ



ՏԱՐԱԾՔԱՅԻՆ

ԶԱՐԳԱՅՈՒՄ

ԶՈՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր

ԱԼԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ¹

Մարզերի սոցիալ-տնտեսական իրավիճակի ամբողջական ուսումնասիրությունը, առկա հիմնախնդիրների բացահայտումը և համապատասխան ծրագրային լուծումների առաջադրումը արժեքավոր է խորքային, հիմնավոր և ստարկայական հեղափոխություն իրականացնելու առումով: Վիճակագրական-տնտեսագիտական տվյալները աղբյուրներում հրապարակված քանակական գնահատականները, ըստ էության, ոչ միայն չեն արդարացում մարզերում տիրող սոցիալական և տնտեսական իրավիճակի սրույգ պատկերը¹ կապված գնահատումների մեթոդաբանության նվազ հավաստիության հետ, այլև խապտ բացառում են որակական գնահատումները: Նշալը, անշուշտ,

¹ Սույն վերլուծությունը կատարվել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի՝ «Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելի մշակում» դրամաշնորհային թեմայով հետազոտության շրջանակում: Հետազոտական խմբում ներգրավվել և աշխատանքներին մասնակցություն են ունեցել ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի տնօրենի ժ/պ, տ.գ.թ., դոցենտ Կարեն Պետրոսյանը, տ.գ.թ., դոցենտ Թադևոս Ավետիսյանը, տ.գ.թ., դոցենտ Գայանե Սալազարյանը, տ.գ.թ., դոցենտ Ղարիբ Հարությունյանը, տ.գ.թ., դոցենտ Լուսյա Գալոյանը, տ.գ.թ., դոցենտ Ռուբեն Ղանթարյանը, տ.գ.թ. Արմեն Մարկոսյանը, տ.գ.թ., ասիստենտ Ալբերտ Հայրապետյանը, տնտեսագիտության տեսության ամբիոնի ասպիրանտ Լիանա Իսայանը, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի մագիստրոս Համլետ Մկրտչյանը:

նվազեցնում է նաև մարզերի սոցիալ-փնտեսական զարգացման ծրագրային նշանակություն ունեցող որոշումների ընդունման և համապատասխան լուծումներ սահմանելու արդյունավետությունը: Որակական գնահատումները հեղինակներն իրականացրել են խնդրո առարկա թեմայի շրջանակում, Շիրակի մարզի համայնքների ղեկավարների հետ նախապես կազմված հարցաշարով հարցազրույցների հիման վրա՝ բացահայտելով առկա սոցիալ-փնտեսական հիմնախնդիրները:

Հիմնաբառեր. համայնքային զարգացում, սոցիալ-փնտեսական իրավիճակ, փնտեսական ներուժ, համայնքի գրավչություն, բրենդինգ, փնտեսական արդյունավետություն, համայնքային ավանդույթներ

JEL: O20, R11, R58

Ներածություն: Տարածքային զարգացման սոցիալ-տնտեսական քաղաքականության բարեհաջող իրականացումը ենթադրում է կառավարման գործընթացի կատարելագործում և արդյունավետության բարձրացում, կառավարման արդիականացման կառուցողական լուծումներ՝ տարածաշրջանում առկա տնտեսական ներուժի առավելագույն օգտագործման հիման վրա մրցունակ տնտեսություն ձևավորելու նպատակով:

Տարածաշրջանի սոցիալ-տնտեսական ներուժի կառավարման արդյունավետությունը, պայմանավորված տնտեսական գործունեության մեջ լրացուցիչ գործոնների՝ նոու-հաուսների, նորարարության, բեկումնային տեխնոլոգիաների ներգրավվածությամբ, անհամաչափ տնտեսական զարգացման պայմաններում պետք է ապահովի ազգային և տարածաշրջանային տնտեսական աճ: Սոցիալ-տնտեսական ներուժի առավել արդյունավետ օգտագործումը տարածաշրջանային ռեսուրսային բազայի գործիքների և մեթոդների առավել լիարժեք կիրառումն է: Միևնույն ժամանակ, տարածաշրջանների (մարզերի) անհամաչափ զարգացումը ցուցադրում է դրանց սոցիալ-տնտեսական ներուժի բոլոր բաղադրիչների ոչ ռացիոնալ օգտագործման իրողությունը: Մարզերի սոցիալ-տնտեսական ներուժի օգտագործման արդյունավետության քանակական գնահատականներն ամբողջովին չեն բացահայտում առկա սոցիալական և տնտեսական ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման պատճառները, տեղական ինքնակառավարման ոլորտում օրենսդրական և մարդկային գործոնի կամայական վարքագծով պայմանավորված ձախողումները, գյուղատնտեսական ոլորտի զարգացման, գյուղմթերքի իրացման, արտահանման խոչընդոտների ծավալներն ու հետևանքները: Կարևորելով մարզերի, տվյալ դեպքում Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական ներուժի օգտագործման արդյունավետության որակական գնահատման անհրաժեշտությունը՝ մարզի և վարչական շրջանների ղեկավարների հետ հարցազրույցների հիման վրա բացահայտվել են բազմաթիվ խնդիրներ, որոնք կարելի է ներկայացնել որպես մարզի զարգացման առաջնահերթություններ:

Առաջնային հետազոտության նպատակով հետազոտական խմբի ընտրած համայնքներն են Գյումրին, Ախուրյանի տարածաշրջանում՝ Ախուրյան, Ազատան, Երազգավորս, Զաջուռ, Մարմաշեն համայնքները, Ամասիայի խոշորացված համայնքը (ընդգրկում է 10 բնակավայր), Աշոցքի տարածաշրջա-

նում՝ Աշոցք համայնքը, Անիի տարածաշրջանում՝ Անի, Սառնաղբյուր և Լանջիկ գյուղերը, Արթիկի տարածաշրջանում՝ Արթիկ քաղաքը և Փանիկ, Մեծ Մանթաշ, Հառիճ, Հովտաշեն գյուղերը: Ընտրված բնակավայրերում բնակվում է մարզի բնակչության գրեթե 75%-ը:

Գրականության ակնարկ: Տարածքային համաչափ զարգացման, շուկայական հարաբերությունների ձևավորման հիմնախնդիրների շարքում տարածքային զարգացման ուղենիշի և ռազմավարության ընտրության, սոցիալական և տնտեսական ոլորտի կարգավորման ձևերի ու մեթոդների կատարելագործման խնդիրն իր առաջնային նշանակությունը չի կորցնում: Տարածաշրջանային համաչափ զարգացման հիմնական հայեցակարգերը ձևակերպվել են տարածաշրջանային աճի նորդասական տեսաբանների՝ *Ջ. Բորդոսի*, *Հ. Ջիբերդի*, *Ռ. Սոլոուի*, *Տ. Սվանի*, *Ք. Մենքլոփ*, *Դ. Ռոմերի* և այլոց կողմից, իսկ ռուս գիտնականներ *Լ.Վ. Կանյորովիչը* և *Վ.Վ. Նովոժիլովը* մեծ ներդրում են ունեցել այդ ոլորտի ուսումնասիրության տնտեսամաթեմատիկական մեթոդների զարգացման գործում: Արտասահմանյան պրակտիկայում տնտեսական ներուժի գնահատման նպատակով, օրինակ, ԱՄՆ նահանգների համար, կիրառվում է «Նահանգների զարգացման քարտեզը» (The Development Report Card for the States (DRC), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀՀԿ) օգտագործում է «Տարածքային կապիտալի հայեցակարգը», իսկ Եվրամիությունը՝ Եվրամիության տարածաշրջանների մրցունակության համաթիվը (EU Regional Competitiveness Index)²:

Տարածաշրջանային զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությունը հատկապես կարևորում են հետխորհրդային երկրների տնտեսագետները, սոցիոլոգները, որոնց գիտական աշխատանքներում հաճախ շեշտադրվում է տարածաշրջանի սոցիալական զարգացման առանցքային հայեցակետերի գնահատումը՝ պայմանավորված տնտեսական անկայունությամբ, ճգնաժամային իրավիճակներով³:

Մ.Վ. Մորոշկինան, իր հերթին, ուսումնասիրել է այն գործոնները, որոնք ազդում են Ռուսաստանի տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման վրա և փորձել է գնահատել դրանց տնտեսական աճի հնարավոր հեռանկարները՝ պայմանավորված անցումային տնտեսության ինստիտուցիոնալ վերափոխումներով⁴: Տնտեսական զարգացման տարբեր ցուցանիշ-

² St'u Development Report Card for the States. URL: http://cfed.org/knowledge_center/research/DRC/ (20.02.2015). EU Regional Competitiveness Index RCI 2013. URL: <https://ec.europa.eu/jrc/en/publication/eurscientific-and-technical-research-reports/eu-regional-competitivenessindex-rci-2013>.

³ St'u *Садыхов Р.М., Мигунова Ю.В., Гаврикова А.В., Ишмуратова Д.Ф.*, Ключевые аспекты социального развития региона в условиях экономической нестабильности. Региональная экономика: теория и практика. Т. 15, № 10, 2017, с. 1906–1919. <https://cyberleninka.ru/article/n/klyucheveye-aspekty-sotsialnogo-razvitiya-regiona-v-usloviyah-ekonomicheskoy-nestabilnosti/viewer>:

⁴ St'u *Морошкина М.В.*, Исследование различий развития российских регионов на основе динамики и уровня валового регионального продукта. Теоретическая и прикладная экономика, № 1, 2013, էջ 64–90. DOI: 10.7256/2306-4595.2013.1.822 URL: https://nbpublish.com/library_read_article.php?id=822:

ների մեծության վրա ազդող գործոններից հիմնական ուշադրությունը կենտրոնացվել է աշխարհագրական դիրքի հետ կապված գործոնների վրա:

«ՀՀ փարածքային համաչափ զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները», «ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելը» մենագրություններում պարզաբանվել են ՀՀ տնտեսական տարածքների (մարզերի) սոցիալ-տնտեսական անհամաչափության պատճառները, գնահատվել են դրանց հետևանքները, առաջարկվել են առկա անհամաչափություններն ու անհամամասնությունները մեղմելու կամ չեզոքացնելու գործնական միջոցառումներ⁵: Մեկ այլ գիտական հետազոտությունում ուսումնասիրվել է ՀՀ մակրոտնտեսական կայունության վրա համայնքային տնտեսության զարգացման և ապակենտրոնացման ազդեցությունը⁶:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության հիմքում առաջնային ուսումնասիրությունն է, որն իրականացվել է ընտրանքային սոցիոլոգիական հարցումների, տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատուների հետ հարցազրույցների հիման վրա: Կազմվել է մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի պարզաբանմանն ուղղված 21 հարց պարունակող հարցաշար, և ընտրված համայնքների ղեկավարների հետ անցկացվել են հարցազրույցներ:

Հետազոտության հիմնական ուղղություններն են մարզի տարբեր համայնքներում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակի, տնտեսական ներուժի գնահատումը, բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի մակարդակի բացահայտումը, սոցիալական հիմնական ենթակառուցվածքների հասանելիությունը, գյուղատնտեսական մթերքի մշակման և իրացման առկա խոչընդոտների բացահայտումը ու զբոսաշրջության զարգացման հնարավորությունները:

Վերլուծություն

1. Ինչպե՞ս կգնահատեք Ձեր համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը:

Այս հարցին համայնքների ղեկավարները հիմնականում պատասխանել են՝ «բավարար» (Ախուրյանի խոշորացված համայնք, Ազատան համայնք, Անի խոշորացված համայնքի Անի, Լանջիկ, Սառնաղբյուր գյուղեր, Հովտաշեն համայնք, Ամասիա խոշորացված համայնք):

Գյումրիում գրեթե 2300 մարդ բնակվում է տնակային պայմաններում, շարունակում են պահպանվել աշխատատեղերի հետ կապված և այլ սոցիալական խնդիրները: **Ազատանում**, լեռնային համայնքների հետ համեմատած, բնակչության կենսամակարդակը բարձր է, համայնքում զարգացած է գյուղատնտեսությունը՝ հիմնականում բանջարաբուծությունը: **Անի** խոշորացված համայնքի բնակչության հիմնական եկամուտը ձևավորվում է արտագնա աշխատանքից: Ամենազարգացած բնակավայրը համարվում է **Ամասիան**: Մինչև խոշորացումը, **Ողջի** համայնքում ոչ մի աշխատանք չի կատարվել, ճանապարհները գտնվել են անմխիթար վիճակում, եղել են սոցիա-

⁵ http://library.asue.am/open/Amberd_lori.pdf?fbclid=IwAR3nDwavM8Yohk-kAZMGv9jm5TYQml_Ok3ZtjGSv7OwVrQVwV-PmuRZCWhQ,
<https://asue.am/am/amberd/research/socio-economic-issues-proportional-development-ra>

⁶ https://asue.am/upload/files/amberd/Amberd_Analysis_FinalReport_2019.pdf

լական տարաբնույթ խնդիրներ: Խոշորացումից հետո ճանապարհները և լուսավորությունը բարելավվել են, սակայն ոռոգման ցանցերի և խմելու ջրի խնդիրը չի լուծվել: **Բյուրակն** համայնքում կարևոր են համարում 4 կմ երկարությամբ միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատումը, գյուղատնտեսության զարգացմանը զարկ տալու հնարավորություն չկա: Համայնքի ղեկավարն ակնկալում է պետական միջամտություն, կարծում են, որ պետական մարմինները գյուղացուն պետք է ապահովեն տեխնիկայով, սերմերով, ավելի բարձր կաթնատվություն և մսատվություն ունեցող ցեղական անասնատեսակներով: **Փանիկում** սոցիալ-տնտեսական մակարդակը Շիրակի մարզի միջին մակարդակից բարձր է, **Մեծ Մանթաշ** համայնքում միջին մակարդակի, բնակչությունը գրեթե ամբողջությամբ զբաղված է հողագործությամբ: **Երազգավորս** համայնքի ղեկավարի գնահատմամբ՝ բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները Շիրակի մարզի միջին մակարդակից ցածր են: **Մարմաշենի** խոշորացված համայնքի ղեկավարը տարածաշրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակը գնահատել է «անբավարար»: Նույնն են նաև **Աշոցք**, **Արթիկ**, **Հառիճ**, **Արփի** համայնքների ղեկավարների գնահատականները: **Մարմաշեն** խոշորացված համայնքում միակ բնակավայրը, որը լուրջ խնդիրներ չունի, **Վահրամաբերդ** գյուղն է: Համայնքի ղեկավարությունը նստավայր չունի, ձեռնարկություններ չկան: Մի քանի փոքր խանութներ կան, որոնց օրական իրացման ծավալը 15000 ՀՀ դրամը չի գերազանցում: **Աշոցք** համայնքի սոցիալ-տնտեսական վատ իրավիճակի պատճառը բարդ բնակլիմայական պայմաններն են, ձմռան տևողությունը: Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն է: **Արթիկում և Հառիճում** աշխատատեղեր չկան, գործազրկության մակարդակը բարձր է, Հառիճի բնակչության մեծամասնությունը մեկնում է արտագնա աշխատանքի:

2. *Ինչո՞վ է համայնքի կյանքը հեփաբրքերական, ինչո՞վ է գրավիչ համայնքը:*

Գյումրու գրավչության գրավականը ճարտարապետական կառույցներն են՝ Կոմայրի արգելոցը, որտեղ կան պատմամշակութային արժեք ունեցող շուրջ 1200 շենք-շինություններ, հուշարձաններ, թանգարաններ: **Ախուրյանը** բավարար թվով մանկապարտեզներ, կոմունալ ծառայությունների օբյեկտներ, արտադարձական ծառայություններ, արվեստի դպրոց, մարզադպրոց, մշակույթի տուն, հարուստ գրադարան ունի: **Ազատան** համայնքը գրավիչ է նրանով, որ մոտ է Գյումրի քաղաքին և գտնվում է միջպետական ճանապարհի վրա, ուշագրավ է նաև ռեյիեֆով, կաթոլիկ և առաքելական եկեղեցիներով: **Մարմաշենը** հայտնի է իր տեսարժան վայրերով՝ եկեղեցի, Մենուայի որդի Արգիշտիի արձանագրություններ, աստվածների գոհասեղան, կիկլոպյան պարիսպներ: **Ջաջուռում** է գտնվում Մինաս Ավետիսյանի տուն-թանգարանը, որը զբոսաշրջությունը զարգացնելու էական նախադրյալ է: **Երազգավորսը**, **Ամասիա** խոշորացված համայնքն առանձնահատուկ գրավչություն չունեն: Ամասիայում անցկացվում են ձմեռային մարզական միջոցառումներ: **Բանդիվանում** գտնվում են հին կիկլոպյան ամրոցներ, այստեղ կարելի է նաև զարգացնել քայլարշավային զբոսաշրջությունը, ձմեռային մարզաձևերը: **Աշոցքը** մեծ հեռանկարներ ունի ձմեռային զբոսաշրջության զարգացման ոլորտում: Այս իմաստով, գրավիչ է նաև **Արթիկը**, այն ունի դահուկային մար-

զածների հիմքի վրա զբոսաշրջությունը զարգացնելու ներուժ: Այստեղ են գտնվում Լմբատավանքը, 4-րդ և 7-րդ դարերի խոնարհված եկեղեցիներ: 4-րդ դարի եկեղեցում հայտնաբերել են Շիրակացու հուշատախտակը, հեթանոսական տաճարի սյուներ, գերեզմաններ, դամբարաններ: **Հառիճում** է գտնվում Հառիճավանքը, որը զբոսաշրջության զարգացման նախադրյալ է: **Արփին** հայտնի է խոշոր եղջերավոր անասունների բուծման հնարավորություններով, **Անի** խոշորացված համայնքը ևս կարող է գրավիչ լինել զբոսաշրջիկների համար, ունի պատմամշակութային կոթողներ: **Լանջիկը** հետաքրքրական է որպես կաթոլիկ համայնք, ունի գործող եկեղեցի: **Փանիկում** գործում են մի շարք սոցիալական օբյեկտներ, համայնքի բնակիչները կաթոլիկ են և պահպանել են ազգային ավանդույթները:

3. *Ձեր կարծիքով՝ զարգացման առումով, համայնքում ո՞ր ոլորտի ներուժն է ավելի արդյունավետ օգտագործվում:*

Գյումրիում համեմատաբար արդյունավետ օգտագործվում է զբոսաշրջության զարգացման, ինչպես նաև հյուրանոցային, ռեստորանային, սննդի և սպասարկման այլ ոլորտների ներուժը: Ունեն Իսրայելի հետ ազատ տնտեսական գոտի ստեղծելու ծրագիր, հաջողություններ են գրանցվել ՏՏ ծրագրերի իրականացման գործում, «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը շուտով շահագործման կհանձնի իր մասնաճյուղը: Ունեն մշակույթի ոլորտը զարգացնելու, մարզական խոշոր կենտրոն կառուցելու նպատակ: **Ախուրյանում** բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: **Ազատանն** ունի դաշտավարության զարգացման մեծ ներուժ, որի հիմքի վրա կարելի է ձևավորել գյուղատնտեսական մթերքի վերամշակման արտադրություններ: Նմանօրինակ արտադրություններ կարելի է ստեղծել **Ախուրյանում**, **Արևիկում**, **Ղարիբջանյանում** և այլ գյուղերում: **Ազատանն** ունի շինարարներ, ինչպես նաև տեխնիկական բազա՝ ավտոկոունկներ, բեռնատարներ, գյուղմեքենաներ, որոնք կարող են վարձակալությամբ տրամադրել ինչպես իրենց համայնքի, այնպես էլ այլ համայնքների բնակիչներին: Ունեն նաև մեծաքանակ մաշված տեխնիկա, նախատեսում են հիմնել դրանց տեխսպասարկման կայան: Գործում է կաթի վերամշակման «Իգիթ» արտադրամասը, որը բավականաչափ մրցունակ է հանրապետությունում: Գյուղատնտեսական շուկա լինելու դեպքում կարող են մշակել բանջարեղեն՝ կաղամբ, գազար, ճակնդեղ: Այս շուկան դեռևս չի կայանում, ուստի բնակչությունը նախընտրում է կարտոֆիլի արտադրությունը: **Երազավորում** անասնապահության զարգացման ներուժը գրեթե ամբողջությամբ օգտագործվում է: Համայնքում բուծում են գոճիներ և դրանք իրացնում մարզի մյուս համայնքներում: **Մարմաշենն** ունի շաքարի ճակնդեղի արտադրության ներուժ: Ներկայումս **Ախուրյանի** տարածաշրջանում գործող շաքարի գործարանը տեղական հումքով չի աշխատում: Համայնքի ղեկավարը կարծում է, որ պետության կողմից գյուղատնտեսական վարկերի տոկոսները (շուրջ 7%-ի չափով) սուբսիդավորելու փոխարեն, ճիշտ կլինի սուբսիդավորել շաքարի ճակնդեղի մթերման գինը (գործարանը պատրաստ է 1 կգ հումքը գնել/մթերել շուրջ 30 դրամով, իսկ մնացած 30 դրամը սուբսիդավորի պետությունը): Ճակնդեղի մշակումը նվազ ռիսկային է, քան, օրինակ՝ ցորենինը: **Ջաջուռում** արդյունավետ օգտագործվում է արտադրության ոլորտի ներուժը: **Ամասիա**

ջրեղրս Եղգսվ Ժղոսը՝ վղվ՛ ղոսխեսիդոսըքո Եվրնսսի ղոսխեսսմոխոսսի ցւել
՝ ք մժսսի տոաձ նքոսսսքղ վժղոմոքոս ցոխիճոսսձսսվ **աՎոոքոքո** ։ ք կքիճոսսսքո մստ
-ոքսսմո նոմ ոքոսսմիճքղ՝ մքղնսքոսմ վկղսս քք կքնք՝ մնքոսխեսսքոսսսմոխի կքնք ք
ջրոսոսսմոս քոսսղքիղոմղ **քոսսսսձո** ։ ք մժսսի քքձոսմ վժղոմոքոս՝ վկղսմի վ՛ կք
-ոքոսս քքիղոքոսսնսմո մքոսքոսսսմոս քոսսսքղ ոքիսս վժղոմոքոս **քքձոքոսո**
։ մոքոսս սնքղոմոսնքո ք սնքղոսոսսմո մնքոսխեսսքոսսսմոսս կո քոսսսքղ վկոաձսս
քոսսմոսսմոս վճքղքոսսսնքո սսղ **քոսսսսիոսսսմք** ։ ոքվճքղքոսսսմոքիք կոսս իսժ
-քոսսմոս վոքքոսսսմոս քք քոսսիճոսսոս քոսսքոքոսձ կոսսքոքոսձ քքքոսսս
սոսսիքս մքլ ։ սսսսնսս սսղ վոքքոսիք կոքոսսն քք կսսմի ք քք քքիղոքոսսնսմ
ժղսսս՝ քքոսխեսսնսս սնքղոսնքղ մքղոմոսի վկոսսնքղձ քոսսքոքոսձ քոսսիճոսսոսի
քք մքոսժ **քոսղոսոսքո** ։ ոքի ժվճոսի վճքրքոսժ քքքոսսիղոքո՝ մսղ՝ քք իվկոսիոսի
-ոս մմքղքոսսքոձ՝ քք կոսս մմքղքոսսքո մոքոսս քոքոսսմոս քոսխեսսքոսսոսս
-սսն՝ քոսղոսսմոս քք քոսոս տոաձ մմքղոքոսսնքղոսս մսղ քոսքսիսսս՝ քք՛ մոս
-ոսիճոս մմքղոքոսսսսիճոսոսս ոք սնքքոսսսմոս քքիղոքոսսնսմ ոքոսսքղ վժղոմոք
-ոս ցոխիճոսսձսս վ **քոսնսսոս** ։ քքոքոսսիղոսոս քք վճքրքոսս
-ոս քքիղոքոսս քք քոսսիճոսսոսիճոսս կքքսսքոսս ցոսիոքոսոսկոքո քոսժղոմոք
-ոս՝ քք կոսսոսքոքոքոսս մմքղքոսսխեսսսիոսսոս քոսսիոսոս քք կոսսոսքոքոսս
-ոսիճոսս **քոսնսս** ։ մոքոսս սնքղոքոսս մքղոքոսսնքոսս քոքո
ք քոսսսքղ քոքոսսնսմոսս
՝ մոքոսս սնքքոսսսմոս քքքոսսիղոսսնսմ մքոսսքո
քոսիճոս՝ սոսսիոսս մմքղոքոսսսսիճոսսոսս վժղոմոքոս քք ի՝ սքոսսս 4
։ քոսսքղ քոքոսսմոս քոսխեսսձոսսոսսն քոքո ք ոքիսսլ ։ մքոսսնսմոսսսսոս
վճքղոկ վքոսսմղ կքքոսսսմոս քք կսսմի մոքոսս քոքոսսմոս քոսխեսսկոս
-ոքոքոքոսս՝ մքղոքոքոսս մսիոսոոսիղ քոսխեսսքոսսքոսն քոսի **քոսղոսիոսսո**
՝ մնքոսսսքոսսնսմոս կսոոսժքո ք քոսղոսսմոս քոսնսմոսիոսղ **կվկոսո** ։ քոս
-քղ քոսիոսձ ք ոքիսս ոք մոքոսս քոսխեսսձոսսձ ։ մոքոսս քոքոսձ կքոսս
-ոսիճոս քոսսս քոսիոսքոսսոսսսսսնս ք քոքոսսմոս քոսխեսսկոսոոքոքո քոսի
քքղոքոքոսս մոսսիճոս ոք քոսժղոմոքոս **կվոքո** ։ կոսոսի ք վճքոս՝ քքքոսսն
քոսնսսսսս ։ կքիճոսնքո քոքղոքոսսքոսսոսսսժղոսն քք սսքս կքքոսնսձսս
ղոսսը քոսսսսսս քոսսսսսս քոսխեսսկոսոոքոքո ք քոսսիսղոսս մքոսսքղ քոսիճոսկ
-քոսս-քղ ։ կքոսսժոսիճոս ք վկոսքղի՝ կսսոսքոս քք քոսղքքքոս՝ քոսխեսս
-ոսսոքոքոքո սսիոսնքքոսս մսձսս քք քոսսնսճն քոսղոսիճոսկ մմքղվճոսնսսն
քոսղքոսսիս ։ քք՛ սսիոսոոսիղ մմքղոքոքոսս քոսիճոսքոսսսսղձ՝ քք տոաձ
մմքղոքոսսսսիճոսս իսքոսս քոքոսսմոս քոսխեսսկոսոոքոքո ։ մսսստոքո
քոք ոքոսսնսմի իսնսձվր վճս՝ մքոսնսմոս քոսխեսսձոսսոսսն քք քոսսղ
-ոսի **քոսքոսս** ։ քոսսոս ք քոսիճոս քոսսխեսսքոսսոոքոքո կոսս՝ (քքքոսն՝ մոս
-ոսն՝ կվքոսսոսսի ք քոսսիճոս) մքոսսքղ քոսխեսսքոսսոսս ք քոսսիճոսսմոս
քքի-
-ոքոսսնսմ կքիսսս **քոսաեղո** ք **քո** ։ քքոքոսնսքոսս ք քոքոսիճոս քոսիճ
ք քոսսնսճն կքոսնր ։ ք ոքոսխեսսքոսս ոք կքոսնսնքոձ քքքոսղքոսս իսքոսս
ոքոքո
քոսիվկոսն ։ իսսնքղ սնքղ
-քոս քոսոսքոսն վճքրքոսսն քոքոսձ ոք վճքրքոսս քոք քք ցոսիճոսսոսքոս
մմքղոսսնսնքղ՝ քոս
-քոս քքր քոքոսսմոս քոսխեսսկոսոոքոքո վքոս **քքքոսն** ։ ոքոսխեսսսիոսսոս
կոս ոքոքոսս կքքոս՛ ք քք կոսս վճք վճքիճոսի մս վոքոժ՝ կքքոսոսի ոքքձ
քք ցոսիճոսս մմքղոքոսնսսն ։ իսնքոսն կքոսն կքքոսսոքոքոսս կքքքոսս
քոսիոոսնք
ք վկոսքոսսոս ք քոսիճոսս կքկո ։ ոքոսոսքոսն սսիճք ոքոսսսսսոսս վկոս
ք քոսքոսն **քոսնսսոքո ք քոսղոսիվկոս** ։ քոսնքղոսսնս ոքոսխեսսկոսոոքոքո
ք ոքոսխեսսքոսսնսնս ք քոսսիսղոսս մքոսսքղ վժղոմոքոս ցոսիճոսսձսս

փոքր բյուջեով չեն կարողանա որևէ հարց լուծել: Համայնքի ղեկավարն օգնություն է ակնկալում սպանդանոցներ հիմնելու գործում՝ մսի պահանջարկը բավարարելու համար: «Բանդիվան կաթի» սեփականատերը ներկայումս սպանդանոց կառուցում է, սակայն աշխատանքներն ընթանում են դանդաղ: **Ողջի** գյուղի ղեկավարն ընդգծել է, որ խանութներում վաճառվող միսը պետք է պարտադիր ունենա սպանդանոցային ծագում, և այդ պահանջն ավելի մեծ խնդիրներ կառաջացնի, քանի որ սպանդանոցների բացակայությունը կրկին նպաստավոր կլինի վերավաճառողների համար: **Աշոցք** խոշորացված համայնքում մասնավոր հատվածը բավարար միջոցներ ունի՝ առկա ներուժն արդյունավետորեն օգտագործելու համար, հատկապես, որ գոյություն ունեցող նախագծերը մեծ ծախսեր չեն պահանջում: **Արթիկում** առկա ներուժն օգտագործելու հնարավորությունները բավարար չեն, **Մեծ Մանթաշում** խնդիր է համարվում բնակչության մոտիվացիան, որի բացակայությունն էլ հանգեցնում է հնարավորությունների մասնակի օգտագործման: **Հառիճում** կարծում են, որ զարգացման համար անհրաժեշտ են լրացուցիչ հնարավորություններ, մասնավորապես՝ բարեկարգման աշխատանքների, առևտրի զարգացման համար տարածքներ ստեղծելու, ենթակառուցվածքները զարգացնելու առումով: **Հովտաշենում** առկա հնարավորությունները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են, բնակիչները քիչ են, աշխատում են մշակել և՛ տնամերձները, և՛ հատկացված հողակտորները: **Արփի** համայնքին անհրաժեշտ է աջակցություն, քանի որ մեկ շնչին ընկնող հողատարածքի մակերեսը 5 հա է: Ունեն հողատարածքներ, որոնք 30 տարի չեն մշակվել: Չօգտագործվող արոտավայրեր ու խոտհարքներ չունեն, սակայն օգտագործվում են ոչ նպատակային: **Փանիկ** համայնքում ոռոգման ջուրը չի բավարարում, հիմնականում մշակվում է գյուղատնտեսական նշանակության համայնքային հողերի ընդամենը 30-40%-ը: Խնդիր է նաև առանձին հողակտորների փոքր մակերեսը՝ միջինը 1 հա, որի վրա ցորենի և գարու մշակումը չի կարող արդյունավետ լինել: Արոտավայրերը ևս չեն բավարարում: **Անի** խոշորացված համայնքի գյուղերում առկա ներուժն օգտագործելու հնարավորությունները բավարար չեն, մասնավորապես՝ բամբակամանվածքային գործարանի համար անհրաժեշտ են որակավորված մասնագետներ: Գյուղատնտեսության ոլորտում ևս աշխատուժի, հատկապես՝ գյուղատնտեսների կարիք կա:

5. Ինչպիսի՞ հիմնական խոչընդոտներ են առկա գյուղատնտեսական մթերքի մշակման և իրացման գործընթացներում:

Ախուրյանում հիմնական մշակաբույսը հացահատիկն է, մշակման առումով հիմնական խոչընդոտը որակյալ սերմերի բացակայությունն է: Բավարար տեխնիկա, գյուղմթերքի վերամշակման հնարավորություններ չունեն: **Ագատանը** չունի գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի լիարժեք շուկա, արտաքին շուկաների հետ երկաթուղային հաղորդակցություն չկա: Իշխանություններին մշտապես առաջարկել են ստեղծել գյուղմթերքի մեծածախ առևտրի շուկա, որը կարող է լինել և՛ ֆիզիկական, և՛ առցանց (էլեկտրոնային) տարածք: Առաջարկում են, որպեսզի մեծածախ առևտրի շուկայում պետության կողմից ստեղծվի արհեստավարժ միջնորդների համակարգ, որի միջոցով գների տարբերությունը կնվազի 20-30 դրամով: **Երազգավորսի** համայնքային հողերի ամբողջական մշակման համար հիմնական խնդիրը

ոռոգման ջրի ոչ բավարար լինելն է, գյուղատնտեսական մթերքի իրացման ցածր գինը, անասնակերի բավականին բարձր գինը: **Ջաջուռում, Մարմաշենում** գյուղատնտեսության արդյունքատվությունն այնքան մեծ չէ, որ իրացման դժվարություններ առաջացնի: **Ամասիայում** ցորենի վաճառքն ընթանում է շատ դանդաղ և ցածր գնով: Գնորդները վերավաճառողներ են, մթերման վայր չկա: **Աշոցքը**, կաթի իրացման առումով, խնդիր չունի, կաթը մթերվում է, իսկ մսի վաճառքի նույնատիպ խնդիրներ, որոնք առկա են ամբողջ մարզում, այստեղ ևս կան: **Արթիկում** հողագործությունը զարգացած չէ, հիմնականում, սեփական կարիքների բավարարման նպատակով, զարգացած է անասնապահությունը: **Մեծ Մանթաշում** կարևորում են բարձրորակ սերմերի ներկրման հարցը. քանի որ ներկրված սերմացուները որակյալ չեն, չեն ապահովում բերքատվության անհրաժեշտ մակարդակ, համայնքը հույս է հայտնում, որ կարող է նոր սերմացու ներկրել: Կարտոֆիլի սերմացուն, օրինակ, ներկրվում է Հոլանդիայից ու Գերմանիայից: Հողերի մշակման տեսանկյունից խոչընդոտ է այն, որ դրանք հողաբարելավման (մելիորացիայի) չեն ենթարկվում, այն դեպքում, երբ ԽՍՀՄ տարիներին գոյություն ուներ հողաբարելավման հստակ ժամանակաշրջան: Մասնավորեցումից ի վեր հողաբարելավում չի կատարվել, որի պատճառով հողի որակը, հետևաբար՝ բերքատվությունը, ընկել է: Մեկ հեկտարի հաշվով հողաբարելավումը կարող է արժենալ 80-100 հազար դրամ: Իրացման խնդիրը հատկապես կապված է արտահանման հետ, քանի որ գյուղմթերքը գրեթե ամբողջությամբ արտահանվում է: Լարսի անցակետի արհեստական խոչընդոտներով պայմանավորված՝ վերջին տարիներին իրացման խնդիրն ավելի սուր է: Դրա լուծման դեպքում գյուղացիներն իրենց բերքն ամբողջությամբ կարտահանեն Ռուսաստան և Վրաստան: Գարու և ցորենի բերքատվությունն էլ բավարար է, քանի որ մշակվող հողերը ջրովի են, գործում են հակակարկտային երկու կայաններ: **Հառիճում** խոչընդոտը միայն ենթակառուցվածքների որակն է՝ շենք-շինություններն ապահովված չեն անհրաժեշտ տեխնիկական պայմաններով: Առկա է մասնագիտական հմտություններ ունեցող բավարար աշխատուժ, հատկապես՝ գորգագործության ոլորտի մասնագետներ: **Հովտաշենի** համայնքային հողերի մշակման հիմնական խոչընդոտները ոռոգման ջրի, գյուղատնտեսական տեխնիկայի ոչ բավարար քանակությունն է, գյուղմթերքի իրացման ցածր գինը: **Փանիկի** համայնքային հողերի ամբողջական մշակման համար հիմնական խնդիրը շարունակում է մնալ ոռոգման ոչ բավարար հնարավորությունը: Գյուղատնտեսական մթերքի իրացման խնդիրը մթերման ցածր գինն է, որի պայմաններում երբեմն գյուղմթերք մշակողի համախառն հասույթը չի ծածկում նույնիսկ կատարված ծախսերը: Խոսքը հատկապես վերաբերում է հացահատիկի մշակմանը և կաթի արտադրությանը: **Անի** խոչորացված համայնքի գյուղերն ունեն ոռոգման ջրի խնդիր: Միայն **Սառնաղբյուր, Մարալիկ** և **Ձորակապ** բնակավայրերն են ապահովված ոռոգման համակարգով, **Սառնաղբյուրն** ունի նաև պոմպերի գործարկման, կարկտակայանների, որակյալ և մասշեյի սերմացուի հասանելիության խնդիրներ: Իրացման ոլորտում հիմնական խոչընդոտը բերքահավաքից հետո գյուղատնտեսական արտադրանքի գնանկումն է՝ ընդհուպ ինքնարժեքի մակարդակի: Յուրաքանչյուր տնտեսություն ունի միջինում երկու հեկտար հողատա-

րաձք, ուստի ցորենը և գարին հիմնականում մշակվում են ոչ թե վաճառքի, այլ անասնապահության զարգացման նպատակով: Առանձին անհատները խորությամբ չեն տիրապետում հողի մշակման տեխնոլոգիաներին, ինչպիսիք են հողային շերտի փոփոխությունը, հողի մշակման թեքությունն ապահովելը, պարարտանյութը ժամանակին տալը: Գյուղացին տիրապետում է ավանդական եղանակներին, ժամանակակից տեխնոլոգիաներ չեն կիրառվում:

6. Ինչպե՞ս եք գնահատում համայնքային վարելահողերի, արոտավայրերի, խոտհարքների օգտագործման արդյունավետությունը, գյուղատնտեսական տեխնիկայի հասանելիությունը:

Ախուրյան համայնքի ղեկավարը կարծում է, որ համայնքային վարելահողերի, արոտավայրերի, խոտհարքների օգտագործման արդյունավետությունը կբարձրանա արտահանման խթանման քաղաքականության շնորհիվ: Այդ առումով, էական նշանակություն կունենա գյուղատնտեսական հողերի խոշորացումը: Գյուղատնտեսական տեխնիկան հնացած է: Համայնքի ղեկավարը հայտնել է բավականին խնդրահարույց միտք, ըստ որի՝ ամբողջ տարածքում պետք է լինի մեկ հողասեփականատեր, արդյունքում աշխատատեղեր կբացվեն, գյուղացիներն ավելի լավ կաշխատեն և ավելի շատ կվաստակեն: **Ազատանում** մեկ միավոր հողատարածքի հաշվով կրկնակի ավելի տեխնիկա է առկա, բայց մի մասը մաշված է: Գյուղատնտեսական տեխնիկան մասնավոր սեփականություն է, համայնքապատկան տեխնիկա չկա: Համայնքն ունի կարտոֆիլ հավաքող կոմբայնի կարիք: **Երազգավորում** մշակվում է համանքի վարելահողերի գրեթե 90%-ը, սակայն հիմնական մասն անջրդի է: Գյուղատնտեսական անհրաժեշտ տեխնիկայով համայնքն ապահովված է, այնուհանդերձ, վարձակալության սակագները մնում են բարձր: **Մարմաշենում** նախկինում պետությունից ստացել են սերմնացու, դիզվառելիք, թեն քիչ քանակությամբ: Չօգտագործվող արոտավայրերն ու խոտհարքները քիչ են: Համայնքի ղեկավարը բարձրաձայնել է, որ չօգտագործվող տարածքները պետք է տրվեն այլ անձանց: **Ջաջուռում** մշակովի հողերը քիչ են և բավականաչափ բերրի չեն, որ մարդիկ զբաղվեն հողագործությամբ: Գյուղում սարքին տեխնիկա չկա, վարձակալում են այլ գյուղերից: Խոշորացումից հետո **Ամասիա** համայնքը ստացել է ընդամենը մեկ կոմբայն, երկու տրակտոր, հակավորման մեկ սարք: Հին տեխնիկա, կոմբայն օգտագործելու դեպքում բերքի կորուստը կազմում է նվազագույնը 20-30%: Նոր տեխնիկա ձեռք բերելու հարցում ակնկալում են կառավարության միջամտությունը: **Աշոցք** խոշորացված համայնքում հողատարածքներն արդյունավետ չեն օգտագործվում: Վարելահողերը լեռնային են, դժվարություններ կան թե՛ տեխնիկա օգտագործելու, թե՛ ռելիեֆի առումով: Մի մասն իրենց հողատարածքները լքել են, շատերն արտագնա աշխատանքի են մեկնել: Աշոցքը USAID-ից ստացել է գյուղտեխնիկա, որի արդյունավետությունն արդեն ակնհայտ է: **Մեծ Մանթաշը** գյուղտեխնիկայի խնդիր չունի, սակայն եղածը հին է: Հույս ունեն օգտվելու լիզինգային ընկերությունների ծառայություններից: Գյուղատնտեսական հողերի 60-65%-ը խոպան է, քանի որ մի մասն անջրդի է, չօգտագործման պատճառներից է նաև արտադրանքի բարձր ինքնարժեքը (վարկային տոկոսադրույք, թանկ սերմացու): **Հառիճ** համայնքն ունի 5 հա խոտհարքներ, 10 հա ֆոնդային հող, կարելի է ասել՝ հողագուրկ համայնք է:

Ֆոնդային հողը 25 տարով հատկացված է այլ համայնքի բնակչի, որն անասնապահությամբ է զբաղվում: Համայնքն ունի 1400 հա-ից ավելի արոտավայրեր, որոնք հիմնականում վարձակալված են: 10 հա տարածքի վրա գործում է մեկ անասնապահական տնտեսություն, իսկ գյուղացիների մյուս մասն ունի մեկ կամ երկու գլուխ անասուն: **Հովտաշեն** համայնքի վարելահողերը գրեթե ամբողջությամբ մշակվում են, սակայն ոռոգման ջրի խնդիրը լուծված չէ: **Արփին** բավարար քանակությամբ տեխնիկա ունի, այն համայնքապատկան է: **Փանիկը** մշակում է համայնքի վարելահողերի ընդամենը 30-40%-ը, իսկ արոտավայրերն ամբողջությամբ օգտագործվում են, սակայն չեն բավարարում անասնապահության պահանջը: Գյուղատնտեսական անհրաժեշտ տեխնիկայով համայնքն ապահովված է, սակայն վարձակալության սակագները բարձր են: Սեփական գյուղտեխնիկա ձեռք բերելը համարում են ոչ նպատակահարմար: **Անի** խոշորացված համայնքի բնակավայրերում գյուղատնտեսական տեխնիկայի հասանելիությունը, պայմանավորված թե՛ քանակով, թե՛ մաշվածությամբ, անբավարար է: Առկա տեխնիկան հին է, ծառայում է արդեն 30-35 տարի, ինչը տեղիք է տալիս բերքի 10-20% կորստի (հատիկները կտրելու, թափվելու, չմաղելու պատճառով): Բարձր է նաև մեկ հեկտար հողատարածք վարելու, հնձելու, մշակելու սակագինը, որը տատանվում է 30-32 հազար ՀՀ դրամի սահմանում: Չնայած առկա խնդիրներին՝ **Լանջիկում ու Սառնաղբյուրում** վարելահողերի 80-85%-ը մշակվում է:

7. Ինչպիսի՞ն են էկոզբոսաշրջության զարգացման հնարավորությունները:

Գյումրի, Արթիկ, Հովտաշեն, Արփի, Երազգավորս համայնքների ղեկավարները չեն անդրադարձել էկոզբոսաշրջության զարգացման հնարավորություններին վերաբերող հարցին: **Ախուրյան** խոշորացված համայնքի ղեկավարի գնահատմամբ՝ համայնքն էկոզբոսաշրջության զարգացման հնարավորություն ունի: Այս նպատակով հատուկ կարևորվում են Հարսնասարի տարածքը, որտեղ հիմնականում խոտհարք և արոտավայր է, բավականին գրավիչ տեղանք է էկոզբոսաշրջության տեսանկյունից, սակայն մանրամասն ուսումնասիրության և անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացման կարիք ունի: **Ջրառատ** բնակավայրում էլ կան տարբեր որակի բնական, հանքային ջրեր: Համայնքի տարածքում աճում են բազմազան դեղաբույսեր: **Ջրառատում** վերականգնվել է 6-րդ դարի եկեղեցին, կան դամբարանադաշտեր, **Կառնուտ** գյուղում գործում է 5-րդ դարի եկեղեցի: **Ազատան** համայնքում հյուրատնային բիզնեսը սկսել է զարգանալ: Գյուղում կան ընտանիքներ, որոնք 2-3 օրով հյուրընկալում են զբոսաշրջիկների: Համայնքապետարանի միջոցները բավարար չեն էկոզբոսաշրջության ոլորտում անհրաժեշտ ներդրումների համար, սակայն մասնավոր հատվածի հետաքրքրությունները մեծանում են: **Մարմաշեն** խոշորացված համայնքի ղեկավարն էապես կարևորել է էկոզբոսաշրջության հնարավորությունները: Նշվել է, որ Հեղնար աղբյուրի եկեղեցու բացվելուց հետո զբոսաշրջիկների հոսքը եռապատկվել է, սակայն ճանապարհը հիմնանորոգման կարիք ունի: **Ջաջուռը** ևս ունի էկոզբոսաշրջության զարգացման լավ հնարավորություններ, սակայն բնակիչները չեն կարողանում լիարժեք օգտվել դրանցից, քանի որ ունեն մասնագիտական, ֆինանսական աջակցության կարիք: **Ամասիա** խոշորացված հա-

մայնքն ունի էկոզբոսաշրջության հեռանկարային զարգացման հնարավորություն, սակայն համայնքում փոքր հյուրատների բիզնեսը դեռևս չի ձևավորվում: **Ողջի** բնակավայրում բացօթյա հանգստի գոտի է գործում, նախատեսվում է ապագայում փոքր հյուրատուն կառուցել: **Աշոցքը** գյուղական էկոզբոսաշրջության հեռանկարային զարգացման համար առանձնահատուկ ներուժ ունի: ԵՄ-ն այստեղ հիմնել է դահուկային կենտրոն: **Մեծ Մանթաշում** առկա են էկոզբոսաշրջության իրական, նպաստավոր պայմաններ: Արտասահմանցի զբոսաշրջիկները ժամանում են այստեղ՝ համայնքի տարածքից ձնագնացներով, դահուկներով դեպի Արագած լեռ բարձրանալու համար: **Հառիճում** ներգնա զբոսաշրջությունը կարելի է զարգացնել, կան անհրաժեշտ բնակլիմայական պայմաններ, սակայն համայնքի ենթակառուցվածքները բավարար չեն, գործում է մեկ խանութ, հյուրատներ չկան, գիշերակացի այլ պայմաններ ևս չկան: **Անի** խոշորացված համայնքում էկոզբոսաշրջության զարգացման առումով հնարավորություններ կան **Սառնաղբյուր** բնակավայրում: Այն ունի անտառային բավական մեծ ծածկույթ, որը թույլ կտա Zipline օգտագործել՝ զարկ տալով արկածային զբոսաշրջությանը: **Փանիկ** համայնքի տարածքում կան շենքային պայմաններ՝ հյուրատներ կառուցելու համար: Զբոսաշրջության ոլորտում ներդրումներ կատարելու իրական մտադրություն ունեցող երկու ներդրողների հետ նախնական բանակցություններ են վարել:

Սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից գրեթե բոլոր համայնքներում էապես կարևորվում է հատկապես գյուղական էկոզբոսաշրջությունը: Հիմնական խնդիրներն առնչվում են ներդրումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հասանելիությանը, ենթակառուցվածքների անբավարարությանը, բիզնես-ծրագրերի մշակման բարդություններին:

8. Ինչպե՞ս կգնահատեք Ձեր համայնքում ջերմոցային տնտեսության զարգացման հնարավորությունները:

Գյումրի քաղաքի Երևանյան խճուղում մեծ ներդրում է կատարվել, ստեղծվել է ծաղիկների ջերմոց: Քաղաքի տարբեր հատվածներում գործում են նաև մի քանի այլ ջերմոցներ: **Ախուրյան** խոշորացված համայնքում կան ջերմոցային փոքր տնտեսություններ, սակայն դրանք տարբեր պատճառներով ներկայումս լիարժեք չեն օգտագործվում: Անհրաժեշտ են նաև նախնական մեծ ներդրումներ, սակայն միայն վարկային միջոցներով նման բիզնեսի հիմնումը բավականին ռիսկային է: **Անի, Ագատան, Երազգավորս, Հառիճ, Հովտաշեն** համայնքների ղեկավարները իրավացիորեն փաստել են, որ իրենց տարածաշրջանը ջերմոցային տնտեսության համար անհրաժեշտ պայմաններով չի կարող մրցակցել Արարատյան դաշտավայրի հետ՝ նկատի ունենալով բնակլիմայական պայմանների էական տարբերությունները: **Մարմաշեն** խոշորացված համայնքում մինչև 8000 քմ մակերեսով ջերմոցային տնտեսություններ գործում են Մայիսյանի տարածքում, սակայն միջին ինքնարժեքը 3 անգամ բարձր է, և ջերմոցային տնտեսության զարգացումը դառնում է անհեռանկար: **Ամասիա** խոշորացված համայնքի որոշ բնակավայրերում կան մի քանի փոքր ջերմոցային տնտեսություններ, արտադրում են սեփական կարիքների համար: Բնակլիմայական խիստ պայմաններից զատ, կա նաև ոռոգման խնդիր: **Աշոցքում** ընդհանրապես ջերմոցներ չկան: **Արթիկում** ջերմոցային տնտեսության զարգացման հնարավորությունները գնա-

հատվում են շատ բարձր: Արդեն իսկ ստեղծվել են նոր աշխատատեղեր, որոնց թիվն ունի կայուն աճի միտում: **Մեծ Մանթաշում**, որպես փորձնական ծրագիր, հիմնել են մեկ ջերմոցային տնտեսություն՝ շուրջ 300 քմ մակերեսով, որտեղ շուրջ կես տարի է՝ աճեցնում են լոլիկ և վարունգ: **Արփի** խոշորացված համայնքում իրականացվել է ջերմոցային տնտեսություն հիմնելու մեկ փորձնական ծրագիր՝ GIZ-ի աջակցությամբ: Սակայն համայնքը գազաֆիկացված չէ: **Փանիկ** համայնքում միայն մեկ տնտեսություն ունի ջերմոց՝ 100 քմ մակերեսով, որտեղ ներդրված է կաթիլային ոռոգման համակարգ:

9. Ոռոգման ջրի հետ կապված ի՞նչ խնդիրներ կան համայնքում, կիրառվո՞ւմ է կաթիլային ոռոգման պրակտիկան:

Գյումրիում ոռոգման ջրի պահանջարկը բավարարված է, ջերմոցային տնտեսություններում կաթիլային ոռոգման համակարգ կիրառվում է: **Ախուրյան** խոշորացված համայնքի որոշ տարածքներում ոռոգման ջրի հարցը լուծված է, սակայն ջրի կորստի ցուցանիշը բարձր է: Կաթիլային ոռոգման պրակտիկան տարածված չէ: Ոռոգման ջրի սակագինը ևս բարձր է: **Ազատանում** կաթիլային ոռոգման համակարգեր ներդրված չեն: Նախատեսում են կառուցել կարգավորիչ ջրամբար: **Երազգավորսում** ևս ոռոգման ջրի հասանելիության և անհրաժեշտ ծավալի ապահովման խնդիրները շարունակում են պահպանվել: Բնակավայրի տարածքում գտնվող Ախուրյանի ջրամբարը ոռոգման ջուր տրամադրում է Արմավիրի և Արագածոտնի մարզերին, իսկ համայնքն այդ ջրամբարից ընդհանրապես չի օգտվում: Մշակաբույսերի առանձնահատկություններով պայմանավորված՝ կաթիլային ոռոգման պրակտիկա չկա: **Մարմաշեն** խոշորացված համայնքում ներդրվել է կաթիլային ոռոգման փորձնական համակարգ՝ ազնվամորու մշակման համար: Լուրջ խնդիրներ կան՝ կապված ոռոգման ցանցի հետ: **Ջաջուռում** կաթիլային ոռոգման համակարգ չի օգտագործվում, սակայն ընդհանուր ոռոգման համակարգը բարվոք վիճակում է: **Ամասիա** խոշորացված համայնքի գրեթե բոլոր բնակավայրերում ջրագծերը հին են և կիսաքանդ: Բնակիչը ոռոգման ջրի գումար վճարում է, բայց ջրամատակարարը ոռոգման ցանցի վերանորոգման հարցով չի զբաղվում: Հողատարածքների 20-25%-ն է ջրովի, որի կեսն է փաստացի օգտագործվում: Մյուս մասն օգտագործվում է որպես խոտհարք: **Ամասիա, Բանդիվան, Հովտունի** բնակավայրերի հողատարածքներն ընդհանրապես չեն ոռոգվում, ոռոգման ցանցերը չեն գործում: **Բյուրակնում, Մեղրաշատում և Գետաշենում** մասնակի կա ոռոգման ցանց: **Աշոցքում, Հառիճում** ոռոգման գործող համակարգ չկա, կաթիլային ոռոգում ներդրված չէ: **Արթիկում** ևս կա ոռոգման ջրի լուրջ խնդիր: Ոռոգման համակարգ գրեթե չկա, բնակիչներն այդ նպատակով օգտագործում են խմելու ջուրը: Սակայն համայնքում սկսել է ձևավորվել կաթիլային ոռոգման համակարգ, կան նաև նախագծեր՝ կաթիլային ոռոգմամբ այգիներ հիմնելու ուղղությամբ: **Մեծ Մանթաշում** ոռոգման ջրի խնդիր չկա: **Հովտաշենում** ոռոգման ջրի հասանելիության և անհրաժեշտ ծավալի ապահովման խնդիրներ կան, կաթիլային ոռոգման անհրաժեշտություն չկա: **Արփի** խոշորացված համայնքի հողերն անջրդի են, կաթիլային ոռոգման կարիք չունեն: **Անի** խոշորացված համայնքը ևս ունի ոռոգման չլուծված խնդիրներ, չկա նաև կաթիլային ոռոգում: **Սառնաղբյուրում** ընդամենը մեկ տնտեսություն ունի կաթիլային ոռոգում,

բնակչության 50%-ի շրջանում առկա է նաև խմելու ջրի խնդիր: **Փանիկում** ոռոգման ջրի հասանելիության և անհրաժեշտ ծավալի ապահովման խնդիրները շարունակում են պահպանվել, կաթիլային ոռոգման պրակտիկան մեծ տարածում չունի:

10. Որո՞նք են համայնքի բնապահպանական խնդիրները:

Գյումրիում բնապահպանական խնդիր է գետակի, օդի աղտոտվածությունը, կանաչ տարածքները քիչ են: **Ախուրյանը, Երազգավորսը, Ագատանը** անտառներ չունեն: Այս համայնքներում օդի աղտոտվածությունը պայմանավորված է շինարարական և գործող հանքարդյունաբերության գործոններով, աղբահանությունն իրականացվում է պայմանագրային հիմունքներով: **Մարմաշեն** խոշորացված համայնքում անտառահատման դեպքեր են գրանցվել, մարդկանց անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով անտառային տարածքներում կենցաղային աղբ է կուտակվում: **Ամասիայում, Աշոցքում, Զաջուռում, Հովտաշենում, Արփիում, Փանիկում** բնապահպանական խնդիրներ չկան: **Աշոցքում** ձմռանը ձյան շերտը հաստ է և, նստելով ծառերի վրա, վնասում է դրանք, կա նաև աղբահանության խնդիր: **Արթիկում** շուրջ 400 հա անտառ է հատվել: Հետագայում տնկվել է 1,2 մլն ծառ՝ շուրջ 70% կաշողակա նությամբ: ՄԱԿ-ի ծրագրով համայնքը շահել է դրամաշնորհ, որով կհիմնվի շուրջ 40 հա այգի: **Մեծ Մանթաշում** ևս իրականացվում է անտառահիմնում: Երկու տարի առաջ GIZ-ի աջակցությամբ 25 հա անտառ հիմնվեց՝ եղևնի, կեչի, սոճի, վայրի տանձ: **Հառիճում** գտնվող շուրջ 104 հա տարածքում, որը պատկանում է «Արթիկ տուֆ» ընկերությանը, կուտակվել է հանքարդյունաբերական թափոն: Այս տարածքը վերականգնման ընթացքի մեջ է: **Անի** համայնքում կա քարի արդյունահանման արտադրություն, որի թափոններն առանձնացվում են հատուկ նախատեսված վայրերում:

11. Միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտային միջոցներն արդյո՞ք բավարար են՝ բնակչության տեղաշարժը պահպանելու համար:

Գյումրիում ներհամայնքային տրանսպորտային միջոցները բավարար են, տրանսպորտային հասանելիության խնդիր կա գիշերային ժամերին: Աշխատանքներ են կատարվում տրանսպորտային պարկը թարմացնելու ուղղությամբ՝ քաղաքում միայն ավտոբուսներով հանրային տրանսպորտն ապահովելու նպատակով: **Ախուրյան** համայնքի խոշորացումից հետո որոշակի փոփոխություններ է նախատեսվում՝ երթուղիներն ավելացնելու, տրանսպորտային պարկը թարմացնելու նպատակով: Ներկայումս Ախուրյանում ավտոբուս չի գործում, քանի որ վնասով է աշխատում: **Ագատանից** Գյումրի երթուղին սպասարկվում է «Գագել»-ներով և ապահովում է առկա պահանջարկը: Խնդիրներ որոշակի լինում են օրվա ծանրաբեռնված ժամերին: **Երազգավորս** համայնքում միջհամայնքային տրանսպորտային հաղորդակցության խնդիրը լուծված է 20 րոպե պարբերականությամբ: **Մարմաշենի** միջհամայնքային տրանսպորտի վիճակը գնահատվել է ոչ բավարար: **Զաջուռում** բնակվում է շուրջ 20 տնային տնտեսություն, եկամտաբեր չէ տրանսպորտային սպասարկումը, և որևէ օպերատոր չի ցանկանում տվյալ երթուղին սպասարկել: **Ամասիան** ունի տրանսպորտային սպասարկման, ճանապարհների բարեկարգման մի շարք խնդիրներ: Հրատապ է Ամասիա-Արեգ-

նադեմ-Ողջի-Երևան նոր երթուղու շահագործումը: Ներկայումս գործում են Ամասիա-Գյումրի, Գյումրի-Բյուրակն երթուղիները: Իսկ համայնքի շուրջ 10 բնակավայրեր համայնքի կենտրոնի հետ կապող երթուղի չունեն: **Աշոցքում** ևս խնդիրներ կան տրանսպորտային ապահովման առումով, հատկապես՝ փոքր բնակավայրերին վերաբերող: **Արթիկում** միջհամայնքային ուղևորափոխադրումը գնահատվում է բավարար: **Մեծ Մանթաշում** տրանսպորտային խնդիր կա՝ կապված սպասարկման հաճախականության հետ: **Հառիճը** նախկինում ունեցել է Երևանի հետ ուղիղ երթուղի: Ներկայում շահագործվում են Գյումրի-Հառիճ, Արթիկ-Հառիճ երթուղիները: **Հովտաշենում** միջհամայնքային տրանսպորտային ապահովումը համայնքի ղեկավարի կողմից գնահատվում է բավարար: **Արփի** խոշորացված համայնքը փորձնական՝ 15 օրով, կազմակերպել է միջհամայնքային տրանսպորտային սպասարկում, սակայն շահութաբեր չլինելու պատճառով դադարեցվել է: **Անի** խոշորացված համայնքում միջհամայնքային տրանսպորտային սպասարկման համար ևս խնդիր են հաճախականությունն ու ծանրաբեռնվածությունը՝ օրվա որոշակի ժամերին, ինչպես նաև տրանսպորտային միջոցների մաշվածությունը: **Փանիկ** համայնքի ղեկավարի գնահատմամբ՝ միջհամայնքային տրանսպորտային հաղորդակցության խնդիրը լուծված է: Խոշորացված համայնքի փոքր բնակավայրերը համայնքի կենտրոնի հետ կապող տրանսպորտային ապահովման խնդիրը առաջնային լուծման կարիք ունի: Խնդիր է նաև Շիրակի մարզի միջհամայնքային տրանսպորտային պարկի թարմացումը և վերազինումը, հատկապես՝ միկրոավտոբուսներն ավտոբուսներով փոխարինելու նպատակով: Օրվա ծանրաբեռնված ժամերին տրանսպորտային միջոցներն աշխատում են գերբեռնված և տեղափոխում են թույլատրվածից ավելի ուղևոր: Որոշ համայնքներում խնդիր է նաև ոչ բավարար հաճախականությունը:

Որպես կանոն, համայնքներում ներհամայնքային տրանսպորտ չկա, բնակչության տեղաշարժը հիմնականում ապահովվում է սեփական ավտոմեքենաներով:

12. Համայնքի ներկա կամ նախկին բնակիչներից կա՞ն անծինք, որոնք արտերկրում ձեռնարկություններ ունեն:

Գյումրու քաղաքապետը նշել է, որ հանդիպումներ է ունեցել սփյուռքահայ բազմաթիվ գործարարների հետ, մասնավորապես՝ Գլենդել քաղաքում, առաջարկել է տարածքի տրամադրում՝ նոր բիզնես հիմնելու համար: **Ազատանից** մի շարք նախկին բնակիչներ ՌԴ-ում ունեն շինարարական ընկերություններ, մեքենայական մեծ պարկեր, նրանցից մեկին առաջարկվել է նմանօրինակ գործունեություն իրականացնել Ազատանում: Հողահատկացում են արել մեծ ավտոպարկ կառուցելու նպատակով: **Ամասիա** խոշորացված համայնքի **Բյուրակն** բնակավայրի՝ արտերկրում բնակվող համապուրջակից գյուղում եկեղեցի է կառուցել: **Անի** խոշորացված համայնքում ներդրումներ կատարվել են շինարարության ոլորտում, իսկ **Սառնաղբյուրում** հայտնի գործարար եղբայրներն ամեն տարի համայնքի յուրաքանչյուր բնակչի ապահովում են 20 կգ ալյուրով, 5 կգ շաքարավազով, 5 կգ մակարոնով: Բացի դրանից, կառուցել են հուշարձաններ, **Արթիկում**՝ եկեղեցի, **Մեծ Մանթաշում**, անհրաժեշտության դեպքում, համայնքին օգնում են: Մյուս՝ **Ախուրյան, Երազգավորս, Մարմաշեն, Աշոցք, Արփի, Հառիճ, Հովտաշեն, Փանիկ** հա-

մայնքների՝ արտերկրում բնակվող հայրենակիցները որևէ ներդրումային կամ այլ ծրագիր չեն իրականացրել:

13. Այլընտրանքային էներգիայի ի՞նչ աղբյուրներից է օգտվում համայնքի բնակչությունը:

Գյումրիում բնակչությունն այլընտրանքային էներգիայի աղբյուրներից հիմնականում օգտվում է արևային էներգիայից, ջրատաքացուցիչներից: **Ախուրյանում** ոչ մեծ քանակությամբ օգտագործում են արևային ֆոտովոլտային կայաններ և ջրատաքացուցիչներ: **Ազատան** համայնքում կառուցել են արևային էլեկտրակայան՝ 70 կՎտ հզորությամբ, օրենսդրական խնդիրներ կան, որոնք լուծում են պահանջում: Ճապոնիայի դեսպանատան և համայնքի միջոցներով շուրջ 90.000 ԱՄՆ դոլար ներդրում է կատարվել, և նպատակ ունեն արևային էլեկտրակայանը օգտագործել ինքնուրույն: **Երագավորս** համայնքի շուրջ 150 տնային տնտեսություններ արդեն իսկ արևային կայաններ ունեն, որոնք արդյունավետ են: Համայնքի բազմաթիվ բնակիչներ ևս ծրագրում են արևային կայաններ տեղադրել: Մոտակա 1-2 տարիներին կանխատեսվում է, որ համայնքի տնային տնտեսությունների շուրջ 80%-ը արևային կայաններ կունենա: **Մարմաշենում** 15-20 տնտեսություն օգտվում է արևային վահանակներից, իսկ **Ջաջուռ** գյուղում՝ ընդամենը մեկ ընտանիք: **Ամասիա** խոշորացված համայնքը սուբվենցիոն ծրագիր է ներկայացրել՝ բոլոր բնակավայրերում արևային էներգիայի վահանակներ տեղադրելու համար, որոնք հիմնականում կօգտագործվեն համայնքապետարանի կարիքների և փողոցային լուսավորության նպատակով: **Աշոցքում** սուբվենցիայով ներդրվել են ֆոտովոլտային կայաններ (օրինակ՝ Աշոցքի մշակույթի տան տանիքում, Բավրայի գյուղապետարանի տանիքում, Մեծ Սրբասար և Ղազանչի համայնքներում ներդրել են չորս կայան): Եթե դրանք իրոք խնայողական լինեն, ինչպես մասնագետներն են պնդում, ապա համայնքն այդ ուղղությամբ ներդրումները կշարունակի: **Արթիկում** նույնպես բնակչությունն օգտվում է արևային էներգիայից: Քաղաքապետերի դաշնագրով՝ Եվրամիությունից մեկ մլն Վտ հզորությամբ արևային կայանի դրամաշնորհ են շահել, 2020 թ. գարնանը կսկսեն շինարարական աշխատանքները: **Արփիում** միայն «Արփի լիճ ազգային պարկ» պետական կազմակերպությունն է օգտվում արևային վահանակներից, սակայն, նախատեսում են զարգացնել ոլորտը: **Անի** խոշորացված համայնքում արևային էներգիայից օգտվում են Լանջիկում: **Հառիճում** արևային էներգիա ստանալու մեծ հնարավորություն կա, քանի որ արևային օրերը շատ են: **Փանիկ** համայնքում սուբվենցիոն ծրագրով համայնքի մանկապարտեզում արևային կայան է տեղադրվել: Նախատեսվում է համայնքային մյուս կազմակերպություններում ևս արևային կայաններ տեղադրելու ծրագրեր իրականացնել: Համայնքի 10 տնային տնտեսություններ արդեն ունեն արդյունավետ գործող արևային կայաններ: Այս դրական օրինակների հենքով համայնքի բազմաթիվ բնակիչներ ևս ծրագրում են արևային կայանների տեղադրում: Մոտակա տարիներին կանխատեսվում է, որ համայնքի տնային տնտեսությունների շուրջ 70-80%-ը արևային կայաններ կունենա: **Հովտաշենում**, **Մեծ Մանթաշում** էներգիայի այլընտրանքային աղբյուրներից չեն օգտվում:

14. Համայնքի զարգացման հեռանկարային պլանավորման ո՞ր խնդիրներն են ըստ առաջնահերթության կարևորվում:

Գյումրու զարգացման հեռանկարային պլանավորմամբ կարևորվել է բնակարանաշինությունը՝ որպես անօթևանության հիմնախնդրի լուծման միջոց, քաղաքային ենթակառուցվածքների զարգացումը, որի մեջ ճանապարհաշինությունը նույնպես հիմնախնդիր է: **Ախուրյան** խոշորացված համայնքում կարևորվում է ճանապարհների բարեկարգումը, փողոցային լուսավորությունը, բոլոր բնակավայրերում կոմունալ պայմանների լիարժեքությունը, աղբահանությունը և ամենակարևորը՝ համապատասխան աղբավայրերի կառուցումը: **Ագատան** համայնքում հիմնականը համայնքային լիազորություններին վերաբերող խնդիրներն են և սոցիալ-տնտեսական զարգացումը: **Երազգավորում**, համայնքի ռազմավարական զարգացման տեսանկյունից, առաջնահերթ է ոչ գյուղատնտեսական նշանակության աշխատատեղերի ստեղծումը, գյուղատնտեսական զբաղվածության արդյունավետության բարձրացումը և կայուն զարգացումը խթանող եկամտի ապահովումը, ոռոգման համակարգի ընդլայնումն ու արդիականացումը (որի ուղղությամբ աշխատանքներն արդեն մեկնարկել են), գազաֆիկացումը, ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատումը: **Մարմաշեն** համայնքում հիմնականը խմելու ջրի, ոռոգման ցանցի, միջհամայնքային ճանապարհների խնդիրներն են: **Ջաջուռը** գազաֆիկացված չէ: **Ամասիա** խոշորացված համայնքի **Բյուրակն** բնակավայրի խնդիրը ճանապարհաշինությունն է, որը թույլ կտա ապահովելու հաղորդակցության արդյունավետ ուղիներ և ստեղծելու կաթի, մսի թեկուզ փոքր արտադրամասեր: **Աշոցք** խոշորացված համայնքի առաջնահերթ խնդիրը գազաֆիկացումն է: Յոթ բնակավայր գազաֆիկացված չէ: **Լուրջ** խնդիր ունեն՝ կապված խմելու ջրի ջրագծերի հետ, իսկ ոռոգման համակարգ չունեն: **Անի** խոշորացված համայնքի **Լանջիկ** բնակավայրում ոռոգման ջրի, Սառնաղբյուրում՝ խմելու ջրի խնդիր կա: Համայնքը հրաժարվել է «Վիոլա» ընկերության սպասարկումից: **Արթիկում** առաջնահերթ է աշխատատեղերի ստեղծումը, բազմաբնակարան շենքերի ամրացումը, մանկապարտեզների և դպրոցների հիմնանորոգումը: Ըստ **Արփիի** զարգացման հնգամյա ծրագրի՝ ամենաիրատապ խնդիրներն են ճանապարհաշինությունը, դպրոցների բարեկարգումը և չմշակվող ցանքատարածությունների նպատակային օգտագործումը: **Հառիճում** առաջնային են մշակույթի տան ներքին հարդարման աշխատանքները և ենթակառուցվածքների բարելավումը, **Հովտաշենում**՝ ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատումը, մանկապարտեզի կառուցումը, **Մեծ Մանթաշ** համայնքում՝ խմելու ջրի մաքրումը: Նախատեսել են երեք տարվա ընթացքում հիմնանորոգել մաշված ջրագծերը: **Փանիկում** առաջնահերթ են շարունակում մնալ ոչ գյուղատնտեսական նշանակության աշխատատեղերի ստեղծումը, գյուղատնտեսական զբաղվածության արդյունավետության բարձրացումն ու կայուն զարգացումը խթանող եկամտի ապահովումը, ոռոգման համակարգի ընդլայնումն ու արդիականացումը, համայնքի մշակույթի կենտրոնի վերանորոգումը:

15. Ձեր համայնքում կա՞ն արդյոք նախաձեռնող բնակիչներ, որոնք պատրաստ են մասնակցելու բնակչության կյանքի որակի բարձրացման ծրագրերին: Եթե այո, ապա ո՞վքեր են:

Գյումրիում անհատական նախաձեռնությունները քիչ են, հիմնականում աշխատում են քաղաքացիական հասարակության կառույցների՝ ՀԿ-ների, հիմնադրամների հետ: **Ախուրյան** խոշորացված համայնքում փորձում են բնակիչների հետ որոշակի ծրագրեր իրականացնել (շաբաթօրյակներ, այլ նախաձեռնություններ): **Կամո** բնակավայրում առաջարկ է եղել ժամանակավոր կացարաններից մեկը դարձնելու ակումբ: **Ազատանում** «Իգիթ» ընկերությունը ստեղծում է աշխատատեղեր, որոնք կնպաստեն համայնքում անասնապահության զարգացմանը, տարածք են խնդրել՝ կաթի վերամշակման արտադրամաս կառուցելու համար: **Ջաջուռում** նախաձեռնություններ դրսևորում են համայնքապետարանի աշխատողները, գյուղացիները, խանութների սեփականատերերը: **Ամասիա** խոշորացված համայնքում երիտասարդների խումբը հասարակական կազմակերպություն է ստեղծել, որը պետք է զբաղվի կարի արտադրությամբ՝ թաղիքագործությամբ («Բրդի ծրագրի» շրջանակում): **Անի** խոշորացված համայնքի երեք բնակավայրերի թե՛ ներկա, թե՛ նախկին բնակիչները հանդես են գալիս տարբեր նախաձեռնություններով: **Արթիկում**, **Հառիճում** բնակիչների մեջ կան բավականին ակտիվ անձինք, որոնք կարող են մասնակցել տարբեր ծրագրերի: **Փանիկ** համայնքում երեք տնային տնտեսություններ զբաղվում են մեղվապահությամբ: Ներկայումս նրանք օգնում են նման ցանկություն ունեցող մյուս տնային տնտեսություններին: **Երազգավորսում**, **Մարմաշենում**, **Աշոցքում**, **Արփիում**, **Մեծ Մանթաշում**, **Հովտաշենում** բնակչության կյանքի որակի բարձրացմանն ուղղված նախաձեռնություններ ցուցաբերող բնակիչներ չկան:

16. Արդյո՞ք Ձեր համայնքում արտադրվում է որևէ յուրահատուկ արտադրանք, որը ներքին և արտաքին շուկաներում վաճառքի ներուժ ունի:

Գյումրու այցեքարտը գարեջուրն է, «Ձաքարյան գրուպի» կողմից արտադրվող ջինսերը, «Լենտեքսի» արտադրանքը: Կան նաև փոքր ու միջին ընկերություններ, որոնց արտադրանքը նույնպես արտահանվում է, ունեն այն ընդլայնելու մեծ ներուժ: **Ախուրյանում** քարի արտադրամասը մշակում է բազալտատիպ վարդագույն քարեր, որոնք կարող են արտասահմանում պահանջարկ ունենալ, գյուղմթերքը, տեքստիլի արտադրանքը ևս ունեն վաճառքի ներուժ: «Լենտեքսը» **Արևիկ** բնակավայրում բացել է թելերի, տրիկոտաժի արտադրության մասնաճյուղ: Այդ արտադրանքը արտաքին շուկայում բավականին լայն պահանջարկ ունի: **Ազատանը** հայտնի է իր կարտոֆիլով, պահանջարկ ունեն նաև «Իգիթի» արտադրանքը, Ազատանի չեչիլ պանիրը: **Երազգավորս** համայնքում բուծվող գոճիներով ապահովվում է Ծիրակի մարզի մյուս համայնքների պահանջարկը: Մեկ տնային տնտեսություն սկսել է փորձնական մշակել կտավատի ձեթ: Այս փորձնական ծրագրի հաջողության դեպքում կտավատի ձեթի արտադրությամբ կարող են զբաղվել նաև համայնքի այլ տնային տնտեսություններ: **Ջաջուռ** գյուղում չիչխան է աճեցվում, որը կարող է դառնալ գյուղի բրենդը: **Ամասիա** խոշորացված համայնքի **Բանդիվան** բնակավայրում բրդի մշակումը ընթացքի մեջ է, թել է արտադրվում: **Անի** խոշորացված համայնքի **Սառնաղբյուր** գյուղում արտադրվում է պանիր, կավից պատրաստում են տարբեր յուրահատուկ իրեր, ինչպես նաև թոնիրներ: **Մարալիկում** տեքստիլ արդյունաբերությունն է

գարգացած, **Լանջիկը** ոչ մի յուրահատուկ արտադրանք չունի: **Աշոցքը, Մարմաշենը, Հառիճը և Հովտաշենը** ևս չունեն յուրահատուկ արտադրանք, սակայն կաթնամթերքն **Աշոցքում** կարող է դառնալ բրենդ: Նախկինում այստեղ կաթնամթերքի գործարան է եղել, որն այժմ չի աշխատում: **Արթիկում** բրենդային կարելի է համարել ելակը, որն արտահանվում է Ռուսաստան, Արաբական Միացյալ Էմիրություններ: Բացվում է նաև տեքստիլի գործարան՝ «Չեխինվեստ» ընկերության հետ, որի արտադրանքն արտահանվելու է: **Արփին** ոչնչով հայտնի չէ, միայն **Արտենիսը** կաթի գործարան ունի: **Մեծ Մանթաշ** համայնքում գործող «Միլենա» գործարանն արտադրում է բարձրորակ պանիր, պայմանագրեր ունեն տարբեր ռեստորանների հետ և իրենց արտադրանքը շատ արագ իրացնում են, հատկապես՝ պանրի սուլուգունի տեսակը: **Փանիկ** համայնքն ավանդաբար հայտնի է եղել և ներկայումս էլ հայտնի է իր տանձով, կանաչ պանրով: Համայնքում արդյունավետ գործում է բազալտի վերամշակման ձեռնարկությունը:

17. Ձեր կողմից նշված արտադրանքը կարո՞ղ է հանդես գալ որպես համայնքի այցեքարտ, ներգրավել զբոսաշրջիկներին:

Վերոնշյալ հարցին բացասական պատասխան են տվել **Մեծ Մանթաշ, Մարմաշեն, Հովտաշեն, Հառիճ** համայնքների ղեկավարները: **Գյումրի** համայնքի ղեկավարը նշել է, որ, բրենդի հետ կապված, եղել են տարբեր քննարկումներ: Ներկայումս զբոսաշրջիկների համար արտադրվում են բազմաթիվ հուշանվերներ, այդ թվում՝ փայտյա, երկաթյա և այլն: Մնացյալ համայնքների ղեկավարները վկայակոչել են հիմնականում գյուղատնտեսական արտադրատեսակները: **Ախուրյանում** չկա որևէ ապրանք, որը կարելի է համարել համայնքի այցեքարտը: Նշվել է, որ, օրինակ, **Արևիկ** բնակավայրում թխում և վաճառում են թոնրի լավաշ: Համայնքում արտադրվող պանիրը և կարագը ևս կարող են գրավիչ լինել զբոսաշրջիկների համար: **Ամասիայում** այցեքարտ դառնալու ներուժ ունի բրդի արտադրությունը, **Ջաջուում**՝ չիչխանը, **Ազատանում**՝ պանրախաշը (չեչիլ պանրով պատրաստվող յուրահատուկ ուտեստ), **Աշոցքում և Արփիում**՝ կաթնամթերքը, **Արթիկում**՝ ելակը, տեքստիլ արտադրանքը, **Երազգավորսում**՝ կանաչ պանիրը, **Փանիկում**՝ կանաչ պանիրը, տանձը, **Անիում** (Սառնաղբյուր)՝ թոնիրը: **Արթիկի** ելակը սպառվում է ոչ միայն տեղական շուկայում, այլև արտահանվում է Ռուսաստան և Արաբական Միացյալ Էմիրություններ: **Ազատանի** համայնքապետը մի շարք մանրամասներ է հայտնել նաև այլ ուշագրավ ծրագրերի մասին: Մասնավորապես, համայնքում հատուկ զբոսաշրջիկների համար նախատեսվում է իրականացնել «Արթնանալ գյուղում աքլորականչին» ծրագիրը: «Չեխ-Արմ Ինվեստ» ՍՊԸ-ն այստեղ հիմնելու է տեքստիլի արտադրություն:

18. Սոցիալ-մշակութային ոլորտի ո՞ր սպորտաբաժանումների աշխատանքներից են դժգոհ համայնքի բնակիչները:

Ջաջուռ, Ազատան, Անի և Մեծ Մանթաշ համայնքների ղեկավարները հավաստիացրել են, որ բնակիչները որևէ դժգոհություն չունեն, սակայն **Մեծ Մանթաշ** և **Անի** համայնքներում մարզահամալիրի անհրաժեշտություն կա: **Հովտաշեն** և **Երազգավորս** համայնքներում մանկապարտեզներ չկան, իսկ **Գյումրիում** բնակիչների դժգոհությունները պայմանավորված են մանկապարտեզների վճարովի լինելու հանգամանքով: Մանկապարտեզի պայման-

ներից դժգոհ են նաև **Արթիկ** համայնքում: **Ամասիա** խոշորացված համայնքի **Ողջի** և **Բյուրակն** գյուղերում բուժկետի կարիք կա: **Աշոցք** համայնքի **Կարմրավան** բնակավայրի բնակիչների համար առկա է դպրոցի մատչելիության խնդիրը: **Ախուրյանի** ղեկավարը նշել է, որ համայնքի բնակիչները դժգոհ են սոցիալական ապահովության ծառայություններից: Սոցիալական ոլորտի ծառայությունները համայնքում տրամադրվում են «մեկ պատուհան» սկզբունքով՝ պայմանավորված մի շարք ծառայությունների՝ միևնույն վայրում տեղակայված լինելու հանգամանքով: **Փանիկ** համայնքում դժգոհությունների մեծ մասը կապված է «Հայփոստ» ՓԲԸ-ի աշխատանքի հետ:

19. Ի՞նչ սոցիալական օբյեկտներ կցանկանայիք կառուցել Ձեր համայնքում:

Ուսումնասիրվող համայնքներում ամենասուրը մանկապարտեզի խնդիրն է: **Գյումրիում**, օրինակ, գործում է երեք տնակային մանկապարտեզ, նախատեսված է առաջիկայում կառուցել «Սուրբ Մարիամ» մանկապարտեզը: Քաղաքում կան նաև մարզական գույքի կարիք ունեցող մարզադպրոցներ: Մանկապարտեզի խնդիրն առկա է նաև **Ամասիայում**, **Աշոցքում**, **Երազգավորսում**, **Հովտաշենում** և **Մարմաշենում**: **Աշոցքում** խնդիրը մասամբ լուծվել է *համայնք-կաթողիկե առաջնորդարան-«Հայկական Կարիքաս» բարեգործական ընկերություն* եռակողմ համագործակցության արդյունքում: **Փանիկ** համայնքն ունի դպրոց, մանկապարտեզ, արվեստի դպրոց, գրադարան, թանգարան, հիվանդանոց, որոնք սպասարկում են հարևան 7 համայնքների շուրջ 12 հազար բնակչությանը: Սակայն մանկապարտեզի գույքի թարմացման, ինչպես նաև գրադարանի վերանորոգման և համալրման խնդիր կա: **Ախուրյան** համայնքում էլ բավականին զարգացած են առողջապահական ծառայությունները: Գործում է «Մոր և մանկան» առողջության կենտրոնը, որտեղ առկա են նախաձննդաբերական և հետձննդաբերական բաժանմունքներ, ինչպես նաև ծննդատուն: Կենտրոնն առավել քան հազեցած է բոլոր անհրաժեշտ սարքավորումներով: Այնուամենայնիվ, խոշորացված համայնքի **Ջրառատ** բնակավայրում կա մանկապարտեզի խնդիր: **Արփի** խոշորացված համայնքում առավել քան սուր է դպրոցների խնդիրը: Հիմնականում անասնապահությամբ զբաղվող համայնքի բոլոր 9 գյուղերում էլ դպրոցները հրատապ վերանորոգման կարիք ունեն: Համայնքն ունի նաև մշակույթի տների և մարզադահլիճների կարիք: Գրեթե նույն վիճակն է նաև **Մարմաշենում**, որտեղ դպրոցների մի մասը վերանորոգված է, մյուսը՝ կիսավեր: Այստեղ 300 աշակերտի համար նախատեսված դպրոց է հաճախում ընդամենը 70 աշակերտ, մանկապարտեզի կարիք ունեն: Իսկ **Երազգավորս** համայնքում ո՛չ եկեղեցի կա, ո՛չ մշակույթի տուն, ո՛չ էլ մանկապարտեզ: Եկեղեցու հիմքերը դրված են, սակայն շինարարությունը դեռևս ավարտին չի հասցվել: **Ջաջուռ** համայնքն ունի մարզադահլիճի և մշակույթի տան կարիք, **Ագատանը**՝ լողավազանի, **Ամասիան**՝ բուժհաստատության, մանկապարտեզի, մարզադպրոցի, **Հառիճը**՝ առևտրային կենտրոնի, **Անին**՝ մարզահամալիրի, մշակույթի տան, **Աշոցքը**՝ մանկապարտեզի, **Արթիկը**՝ մարզահամալիրի, **Հովտաշենը**՝ մանկապարտեզի, **Մեծ Մանթաշը**՝ մշակույթի տան և մարզահամալիրի:

20. Արդյո՞ք Ձեր համայնքում բնակչության տեղաշարժ կա, եթե՞ այո, ապա ի՞նչ ուղղությամբ է այն և պատճառները:

Մարզկենտրոն **Գյումրիում** թեպետ արտագաղթ կա, սակայն մեծ ծավալների չի հասնում: Բնակչության արտագաղթը շարունակվում է **Ախուրյան, Ամասիա, Անի, Աշոցք, Արթիկ, Երազգավորս, Մարմաշեն, Մեծ Մանթաշ և Փանիկ** համայնքներում: Ըստ համայնքապետի՝ **Ախուրյանում** արտագաղթի շարժառիթը հիմնականում տնտեսական բնույթի է: Մարդիկ արտագաղթում են աշխատատեղերի բացակայության պատճառով: **Ամասիայից** մեկնում են հիմնականում դեպի Գյումրի և Երևան: Մտահոգիչ վիճակագրություն ներկայացրեց **Բյուրակն** բնակավայրի ղեկավարը: 1991 թ. գյուղն ունեցել է 1200 բնակիչ, ներկայումս՝ ընդամենը 450-500: Արտագաղթի խնդիրը չի շրջանցել նաև **Անի** խոշորացված համայնքի երեք բնակավայրերը: **Լանջիկում** բնակչության եկամուտների հիմնական աղբյուրը արտագնա աշխատանքն է: Ըստ համայնքապետի՝ արտագնա աշխատանքի մեկնում է բնակչության 90%-ը, իսկ **Սառնաղբյուրում** այդ ցուցանիշը շուրջ 80% է: **Լանջիկից** բնակչության մեծ տեղաշարժ կա նաև դեպի Երևան, Գյումրի, Մարալիկ, Թալին: **Աշոցքում** նույնպես արտագաղթը նկատելի է, սակայն համայնքապետը նշել է, որ մարդկանց սպասումները լավատեսական են: **Արթիկում**, ցավոք, ճոճանակային միգրացիան փոխարինվել է արտերկրում մշտական բնակությամբ: Համայնքում նկատվում է նաև ներքին միգրացիա՝ գյուղերից դեպի Արթիկ: Արտագաղթում են նաև **Երազգավորս** համայնքից, բնակչության արտագաղթը շարունակվում է հիմնականում դեպի ՌԴ, ինչպես նաև Երևան: Բնակչությունը հիմնականում արտագաղթում է՝ կայուն աշխատանք գտնելու նպատակով: Արդեն իսկ 80 ընտանիք մշտական բնակություն է հաստատել ՌԴ-ում: Ուրախալի է, որ վերջին շրջանում նկատվում է արտագաղթի նվազման միտում: Նման միտում է արձանագրվել նաև **Փանիկ** համայնքում: **Մարմաշեն** գյուղում շուրջ 450 տնից 100-ում չեն բնակվում: Ըստ համայնքապետի՝ արտագաղթը երբեք էլ չի դադարել: **Մեծ Մանթաշում** վերջին 5 տարում երեք ընտանիք է արտագաղթել, իսկ վերջին երեսուն տարում՝ 100 ընտանիք: **Հովտաշենում**, ի տարբերություն վերոնշյալ համայնքների, արտագաղթը համատարած չէ: Բնակիչները համայնքը լքում են՝ հիմնականում արտագնա աշխատանքի նպատակով: Գրեթե բոլոր համայնքների ղեկավարները արտագաղթի շարժառիթը համարում են սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները:

Արտագաղթի տեսանկյունից, ընդհանուր պատկերն առավել բարվոք է **Ագատան, Գյումրի, Հառիճ և Արփի** համայնքներում: Ագատանցիները հիմնականում աշխատանք են փնտրում Գյումրիում: **Հառիճում** հաշվառումից դուրս եկողներ չկան: Յուրաքանչյուր տարի ընդամենը 1-2 հոգի է մեկնում արտագնա աշխատանքի: Եվ վերջապես, **Արփի** խոշորացված համայնքում նույնպես նկատելի է միայն ճոճանակային միգրացիա: Լքված տներ չկան: Խոշոր եղջերավոր անասունների մեծ քանակությամբ պայմանավորված՝ գործագրկության գրեթե գրոյական մակարդակ է: Համայնքը հարուստ է ոչ միայն անասնազլխաքանակով, այլև գյուղատնտեսական տեխնիկայով: Այն երբեմն վարձակալությամբ է տրվում հարևան համայնքներին:

21. Արդյո՞ք համայնքում գործում է խնդիրները միասնաբար լուծելու ավանդույթ:

Գրեթե բոլոր համայնքապետերը նշել են, որ այդպիսի ավանդույթներ կան: Սակայն, ուշագրավ մանրամասներ են հայտնել մի քանիսը: **Գյումրիում**, օրինակ, կարևորագույն հարցերը դրվում են հանրային քննարկման: Ավագանու նիստերը բաց են, և կարող է մասնակցել յուրաքանչյուր ոք: Ակտիվ աշխատում են քաղաքացիական հասարակության հետ: **Երազզավորսում** միասնաբար նշում են Բագրատունյաց տոնը: Համայնքի բնակիչների համատեղ ջանքերով մշակում են դաշտամիջյան և համայնքային կազմակերպությունների հարակից տարածքները: Համայնքը համատեղ մաքրելու ավանդույթը գործում է նաև **Հովտաշենում և Փանիկում**: Փանիկում համայնքի ղեկավարը պարբերաբար կազմակերպում է ծնողների այցելություններ զորամասեր, որտեղ ծառայում են համայնքից զորակոչված ժամկետային զինծառայողները: Համայնքի բյուջեից պարբերաբար դրամական օգնություն է տրամադրվում անապահով ընտանիքներին, զոհված զինծառայողների ընտանիքներին, ուսանողներին: **Մարմաշենում** համատեղ նշում են Ուսուցչի տոնը, Մարտի 8-ը և Մեծահասակների տոնը, հոկտեմբերին՝ Բերքուբարիքի փառատոնը, Ազատամարտիկների տոնը: **Արփիում** էլ պարբերաբար շաբաթօրյակներ և ծառատունկեր են կազմակերպվում: **Աշոցքում** ընդունված են տարբեր մարզական միջոցառումները. բնակավայրերի միջև կազմակերպվում են ֆուտբոլային մրցումներ, պլանավորում են նաև վոլեյբոլի մրցումներ: **Ազատանի** համայնքապետը վստահեցրել է, որ համայնքի բնակիչները աչքի են ընկնում բացառիկ աշխատասիրությամբ. մշակում են ոչ միայն իրենց հողերը, այլև հարևան Ախուրյան համայնքի հողերի մի մասը: Բնակիչները, համայնքի տրամադրած տեխնիկայով, աղբից մաքրել են շուրջ 6000 քմ տարածք:

Ախուրյան խոշորացված համայնքի ղեկավարի դիտարկմամբ՝ մշտապես փորձել են ավելի թափանցիկ աշխատել և բնակիչներին մասնակից դարձնել համայնքային կառավարմանն ու որոշումների ընդունմանը:

Եզրակացություններ: Այսպիսով, ցանկացած տարածաշրջանային համակարգի սոցիալ-տնտեսական զարգացումը որոշվում է արտադրական, աշխատանքային, սպառողական, ենթակառուցվածքային, ռեսուրսահունքային, ինստիտուցիոնալ, ինովացիոն, ֆինանսական և բազմաթիվ այլ գործոններով, որոնք ձևավորում են տարածաշրջանում առկա իրավիճակի բնութագրերը: ՀՀ Շիրակի մարզի բնական, ժողովրդագրական, տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական ներուժի համադրության ինքնատիպությունը որոշում են տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման գերակայությունները: Ուսումնասիրվող մարզի տնտեսության կարևորագույն ճյուղերը, որոնք ունեն ինչպես հանրապետական, այնպես էլ միջտարածաշրջանային նշանակություն, բարձրտեխնոլոգիական, ագրոարդյունաբերական, զբոսաշրջային և հանգստի համալիրներն են, ինչպես նաև առևտուրը: Սոցիալ-տնտեսական զարգացման այն միջավայրը, որը ձևավորվել է Շիրակի մարզում, պետք է դառնա արդյունավետ տնտեսական քաղաքականության խթան, հատկապես՝ կլաստերային քաղաքականության հիման վրա: Այնուամենայնիվ, տարածաշրջանային քաղաքականության որոշիչ ուղղությունները պետք է լինեն նպատակային ծրագրերը, որոնք պետք է ակտիվորեն ազդեն տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

Շիրակի մարզը գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու տեսանկյունից թեև ակտիվ է, սակայն ունի բավական լուրջ դժվարություններ, որոնք հիմնականում պայմանավորված են մի կողմից հողերի բերքատվության ցածր մակարդակով, ոռոգման ցանցի բացակայությամբ կամ մաշվածությամբ, գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածությամբ և պակասով, մյուս կողմից՝ բնական աղետներով, դիզվառելիքի թանկությամբ, սերմացուի որակով և գնով, ինչն էլ թույլ չի տալիս, որ բնակիչը լիարժեք կերպով զբաղվի գյուղատնտեսությամբ: Մարզում զգալի դժվարություններ կան նաև գյուղմթերքի իրացման հարցերում:

Մարզի կայուն զարգացման կառավարումն իրականացվում է սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումների և ծրագրերի մշակմամբ: Նույնքան կարևոր է նաև տնտեսական ներուժի գնահատումը, որը տարածքի կայուն և անվտանգ զարգացման՝ գիտական հիմունքներով հայեցակարգի ձևավորման միջուկն է: Կարևոր ենք համարում նաև տեսական հայեցակարգերի մշակման արդիականությունը, որոնք հնարավորություն կտան հիմնավորելու և իրականացնելու տնտեսության տարածքային կառավարման արդյունավետ ձևեր և մշակելու մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մրցակցային ռազմավարությունների փաթեթ:

Օգտագործված գրականություն

1. Լոռու և Տավուշի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելը: ՀՊՏՀ, Ամբերդ, «Տնտեսագետ» հրատ., Եր., 2020, http://library.asue.am/open/Amberd_lori.pdf?fbclid=IwAR3nDwavM8Yohk-kAZMGv9jm5TYQml_Ok3ZtjGSv7OwVrQVwV-PmuRZCWhQ:
2. Морощкина М.В., Исследование различий развития российских регионов на основе динамики и уровня валового регионального продукта. Теоретическая и прикладная экономика, № 1, 2013, DOI: 10.7256/2306-4595.2013.1.822 URL, https://nbpublish.com/library_read_article.php?id=822.
3. Садыков Р.М., Мигунова Ю.В., Гаврикова А.В., Ишмуратова Д.Ф., Ключевые аспекты социального развития региона в условиях экономической нестабильности. Региональная экономика: теория и практика. Т. 15, № 10, 2017, с. 1906–1919. <https://cyberleninka.ru/article/n/klyuchevye-aspekty-sotsialnogo-razvitiya-regiona-v-usloviyah-ekonomicheskoy-nestabilnosti/viewer>.
4. Щуков В.Н., Экономический потенциал регионов России и эффективность его использования: Учебное пособие, Иваново: ИГТА, 2002.
5. Development Report Card for the States. URL: http://cfed.org/knowledge_center/research/DRC/ (дата обращения: 20.02.2015). 21. EU.
6. Regional Competitiveness Index RCI 2013. URL: <https://ec.europa.eu/jrc/en/publication/eurscientific-and-technical-research-reports/eu-regional-competitivenessindex-rci-2013>.

ЗОЯ ТАДЕВОСЯН

*Профессор кафедры международных экономических отношений АГЭУ,
доктор экономических наук*

АЛЬБЕРТ АЙРАПЕТЯН

*Ассистент кафедры международных экономических отношений АГЭУ,
кандидат экономических наук*

Анализ результатов первичного исследования проблем общин Ширакского марза. – Количественные оценки, опубликованные статистически-информационными источниками различного уровня, по сути, связанные с низкой достоверностью методологии оценок и обусловленных различными обстоятельствами, не только не отражают реальную картину социальной и экономической ситуации в регионах, но и полностью исключают качественные оценки.

Отмеченный факт, несомненно, снижает эффективность принятия решений, имеющих программное значение для социально-экономического развития регионов и определения соответствующих решений. Цель реализации качественных оценок авторами была достигнута в рамках данной темы путем выявления основных социально-экономических проблем в марзе посредством интервью с руководителями общин различных уровней Ширакского марза - с заранее составленным перечнем вопросов (опросного листа).

Ключевые слова: *региональное развитие, социально-экономическая ситуация, экономический потенциал, привлекательность региона (марза), брендинг, экономическая эффективность, традиции общин.*

JEL: O20, R11, R58

ZOYA TADEVOSYAN

*Professor at the Chair of International Economic Relations at ASUE,
Doctor of Economics*

ALBERT HAYRAPETYAN

*Assistant Professor at the Chair of International Economic Relations at ASUE,
PhD in Economics*

Analysis of the Results of the Initial Study of Community Problems in Shirak Marz. – A full study of the socio-economic situation in the regions, identification of existing problems and the promotion of appropriate policy solutions are valuable in terms of conducting in-depth, well-founded and substantive research. Quantitative estimates published by statistical and information sources of various levels, due to the low reliability of the assessment methodology and due to various other circumstances, not only do not reflect the real picture of the social and economic situation in the regions, but also completely exclude qualitative estimates. Therefore, the efficacy of decision-making is reduced which entails a significantly

negative impact on the socio-economic development of regions and the determination of appropriate solutions. The goal of implementing qualitative assessments was achieved within the framework of this topic by identifying the main socio-economic problems in the Marz, through in-depth interviews with community leaders at various levels of Shirak Marz with an in-advance prepared questionnaire.

Key words: regional development, socio-economic situation, economic potential, attractiveness of the region (Marz), branding, economic efficiency, community traditions.

JEL: O20, R11, R58